Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 13-ի N 636 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների (այսուհետ՝ պատվիրատու) կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների (այսուհետ՝ ապրանքատեսակներ) տեխնիկական բնութագրերի և առավելագույն գների պարբերաբար ուսումնասիրման, սահմանման և հրապարակման հետ կապված հարաբերությունները:

2. Պատվիրատուների կողմից ձեռք բերվող ապրանքատեսակների առավելագույն գներն ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության <<Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (այսուհետ՝ կազմակերպություն) և ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հաստատմանը: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարն առավելագույն գները հաստատում է անհատական իրավական ակտով:

3. Պատվիրատուների կողմից ձեռք բերվող ապրանքատեսակների առավելագույն գները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության

պաշտոնական կայքում այնպես, որ հնարավոր լինի դիտել գները նաև նախորդող ժամանակահատվածների համար:

4. Պատվիրատուների կողմից ձեռք բերվող ապրանքատեսակների առավելագույն գների ուսումնասիրման նպատակով վաճառքի նախընտրելի օբյեկտների (տնտեսավարող սուբյեկտի ֆիրմային անվանումը կամ անվանումը, հասցեն) և սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող ապրանքային նշանների վերաբերյալ տեղեկատվությունը կազմակերպությունն ստանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից (այսուհետ՝ հանձնաժողով) սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետներում:

5. Պատվիրատուների կողմից ձեռք բերվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունը կազմակերպությունն ստանում է <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> փակ բաժնետիրական ընկերությունից՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջոցով:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Կազմակերպության կողմից ապրանքատեսակների գներն ուսումնասիրվում են եռամսյա պարբերականությամբ՝ բացառությամբ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

7. Բարձր գնային ճկունություն ունեցող որոշ ապրաքատեսակների գները, որոնք հակված են հաճախակի փոփոխության, ուսումնասիրվում են յուրաքանչյուր օր: Այդպիսի ապրանքների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից:

8. Կազմակերպության կողմից ապրանքատեսակների գներն ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից տրամադրված առևտրի օբյեկտներում՝ ըստ յուրաքանչյուր ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքային նշանների: Ապրանքային նշաններ չունեցող ապրանքների գները կազմակերպությունն ուսումնասիրում է ըստ հանձնաժողովի կողմից տրամադրված առևտրի օբյեկտների:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

9. Ապրանքատեսակի գնի վերաբերյալ մեկից ավելի տեղեկատվության դեպքում առավելագույն գինը որոշվում է միջին թվաբանականով:

10. Կազմակերպությունը կարող է ապրանքները բաժանել տասնօրյակներում ուսումնասիրման ենթակա խմբերի և յուրաքանչյուր տասնօրյակի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց ուսումնասիրության արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

11. Եթե բարձր գնային ճկունություն ունեցող ապրաքատեսակների գների փոփոխությունը նախորդ հրապարակված գնի նկատմամբ կազմել է 3 և ավելի տոկոս, ապա կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

12. Եռամսյակի ընթացքում ապրանքատեսակների հրապարակված առավելագույն գների 15 և ավելի տոկոս փոփոխության դեպքում, դրանց վերանայման հիմնավորմամբ և առաջարկությամբ, պատվիրատուն կարող է դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, որը սահմանված կարգով իրականացնում է առավելագույն գների վերանայումը և հրապարակումը:

IV. ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ապրանքատեսակների ցանկը կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջոցով տրամադրում է <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> փակ բաժնետիրական ընկերությանը, որից հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջոցով 10-օրյա ժամկետում ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է կազմակերպությանը:

14. Կազմակերպությունը 3-օրյա ժամկետում ապրանքատեսակների ցանկը՝ տեխնիկական բնութագրերով, ներկայացնում է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, որը 10-օրյա ժամկետում կազմակերպությանն է տրամադրում տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքային նշանների և նախընտրելի առևտրի օբյեկտների վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ